ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով թվով 13 դպրոցների մարզագույքի (մարմնամարզական նստարան) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան **15.08.2024թ**

Գնահատող հանձնաժողովի կազմը.

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան

Հանձնաժողովի անդամ՝ Անահիտ Հակոբյան

Ցոլակ Հակոբյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Լիանա Խառատյան

1. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/59» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 8-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ին էլեկտրոնային եղանակով՝ eauction.armeps.am համակարգի միջոցով 07.08.2024թ ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ և կնքվելիք պայմանագրի նախագիծը, սակայն վերջինս «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում (մինչև 2024 թվականի օգոստոսի 14-ը ներառյալ) չի ներկայացրել ստորագրված պայմանագիրը, որակավորման ու պայմանագրի ապահովումները:

1.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը՝ զրկել պայմանագիր կնքելու իրավունքից. «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ին՝ 8-րդ չափաբաժնի մասով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.3 Առաջնորդվելով սույն արձանագրության 1.2 կետով և ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 58-րդ կետով, գնման ընթացակարգը 8-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի հիման վրա, պայմանագիր չկնքելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

1.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել «Ազատ Հայրապետյան Անդրանիկի» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան

---------- Անահիտ Հակոբյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Լիանա Խառատյան /քարտուղար/